SMG ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ուժի մեջ կմտնի՝ 2018թ. մարտ ամսից

Ծառայությունների այս պայմանները «SMG-ի Գաղտնիության քաղաքականության» հետ միասին («**Պայմաններ**») վերաբերում են այն պայմաններին, որտեղ Ծառայությունների կառավարման խումբ ՍՊԸ-ն և նրա ստորաբաժանումները («**SMG**» կամ «մենք» կամ «մեզ») առաջարկում են մուտք գործել կայքեր, ծառայություններ և հավելվածներ, ներառյալ բջջային հավելվածներ, որտեղ այս «Պայմանները» տեղադրված են, կցված կամ որոնց հղում է կատարվում (ընդհանրական՝ «**SMG ծառայություններ**»):

Նախքան SMG Ծառայություններ մուտք գործելն ու օգտագործելը, ուշադիր կարդացեք այս «Պայմանները». այն իրենից ներկայացնում է իրավական համաձայնագիր SMG-ի և ձեր միջև:

ՕԳՏՎԵԼՈՎ ՅԱՆԿԱՑԱԾ SMG ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ, ԴՈՒՔ ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ԵՔ ԱՅԴ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՔ, ՈՐ ԴՈՒՔ ԼՐԻՎ ԳՈՐԾՈՒՆԱԿ ԵՔ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՕԳՏՎԵԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ: ԵԹԵ ԴՈՒՔ SMG ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՁԵՐ ԳՈՐԾԱՏՈՒԻ ԱՆՈՒՆԻՑ, ՁԵՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԴ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ՁԵՐ ԳՈՐԾԱՏՈՒԻ ԵՎ SMG-Ի ՄԻՋԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ԵՎ ԴՈՒՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ ԵՔ, ՈՐ ԴՈՒՔ ԱՅՍ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԵՔ ՊԱՐՏԱԴՐԵԼ ՁԵՐ ԳՈՐԾԱՏՈՒԻՆ ԱՅՍ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ՝ Այս Պայմանները պարունակում են դրույթներ, որոնք սահմանափակում են մեր պատասխանատվությունը ձեր նկատմամբ, և պարտավորեցնում են ձեզ լուծել մեզ հետ ունեցած ցանկացած վեճ վերջնական և օրենքի սահմաններում՝ հաշտարարի անհատական հիմունքներով և ոչ որպես որևէ կողմի կամ ներկայացուցչի հայցի մաս Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ստորև «ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՈՒՄԸ, ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ» (Բաժին 7), «ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ» (Բաժին 9):

ԵԹԵ ԴՈՒՔ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՔ ԲՈԼՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ՇԱՐԱԴՐՎԱԾ ԵՆ ԱՅՍ SMG ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԵՋ, ԴՈՒՔ ՉԵՔ ԿԱՐՈՂ ՕԳՏՎԵԼ SMG ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ:

1. ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս Պայմաններն ուժի մեջ մտնելու ամսաթիվը նշված է այս էջի վերևում: Սույն Պայմանները կարող են փոփոխվել նոր գործառույթներ ավելացնելու դեպքում;: SMG-ն կարող է փոփոխել այդ Պայմանները ցանկացած պահի՝ թարմացնելով Պայմանները: Ցանկացած նման փոփոխություն վերաբերում է ձեզ, հետևաբար, պարբերաբար այցելեք այս էջը՝ վերանայելու սույն Պայմանները: Ծառայությունների փոփոխված Պայմանների հրապարակումից հետո, SMG Ծառայություններից ձեր շարունակական օգտվելը կնշանակի փոփոխված պայմանների ձեր ընդունումը: Փոփոխված Պայմանները փոխարինում են ծանուցումների կամ հայտարարությունների բոլոր նախորդող տարբերակները, պայմանագրերի բոլոր դրույթները, սակայն փոփոխությունները չեն կիրառվում հետադարձ ուժով:

2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

SMG Ծառայությունների կողմից առաջարկվող որոշ ծառայություններ, ինչպիսիք են բջջային հավելվածները, վիճակախաղերը, մրցույթները և այլ Ծառայությունները, կարող են կառավարվել լրացուցիչ պայմաններով, որոնք կից ներկայացված են («Լրացուցիչ Պայմաններ»): Նախքան նման ծառայություններից օգտվելը դուք պետք է համաձայնեք լրացուցիչ պայմանների հետ: Ցանկացած լրացուցիչ պայմաններ պետք է կիրառվեն ի լրումն սույն Պայմաններին: Եթե լրացուցիչ Պայմանների որևէ դրույթ հակասում է սույն Պայմանների ցանկացած դրույթին, ապա լրացուցիչ Պայմանները կգերակշռեն սույն Պայմանների վիճահարույց դրույթներին բացառությամբ այնքանով, որքանով որ դա հակասում է:

3. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ/ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Նախքան SMG Ծառայություններից օգտագործելը, ուշադիր կարդացեք SMG-ի Գաղտնիության քաղաքականությունը՝ պարզելու, թե որ անձնական տվյալներն է SMG-ն հավաքագրելու SMG Ծառայությունների մեջ, ինչպես ենք մենք մշակելու այն և ում հետ մենք կարող ենք կիսել ձեր անձնական տվյալները: Դուք կարող եք SMG-ի Գաղտնիության քաղաքականության պատճենը գտնել այստեղ՝

4. SMG-Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

SMG Ծառայությունները, ներառյալ ցանկացած տեղեկություն, գրաֆիկա, պատկերներ, արվեստի գործեր, տեքստեր, տեսահոլովակներ, տվյալների հավաքագրում, ծրագրային ապահովում, աուդիո տեսահոլովակ, ապրանքային նշան, սպասարկման նշաններ, գրանցում, ֆիրմային անվանումներ և այլ նյութեր, որոնք ներկայացված են SMG Ծառայությունների միջոցով, («**SMG Բովանդակություն**») պատկանում են SMG ընկերությանը, մեր մասնաճյուղերին, գործընկերներին, արտոնագրված կամ ներկայացված ընկերություններին և գործում են ինչպես ԱՄՆ-ի հովանու ներքո, այնպես էլ օտար երկրների հեղինակային իրավունքով, ապրանքային նշանի արտոնագրով և այլ օրենքներով: Բացառությամբ, ինչպես նախատեսված է ստորև նշված սահմանափակված լիցենզիայի բաժնում կամ գործող օրենքի համաձայն՝ ապրանքանիշերը, հեղինակային այլ մտավոր սեփականությունները և SMG Ծառայությունների որևէ մաս չեն կարող օգտագործվել, վերարտադրվել, պատճենվել, կրկնօրինակվել, վաճառվել, վերավաճառվել, մուտք գործել,

փոփոխվել կամ այլ կերպ շահագործվել, ամբողջությամբ կամ մասամբ, ցանկացած նպատակի համար՝ առանց որևէ նախնական գրավոր համաձայնության։ SMG Բովանդակության չարտոնագրված օգտագործումը կարող է խախտել ապրանքային նշանի հեղինակային իրավունքը և այլ օրենքներ:

Եթե համաձայն եք այս Պայմաններին (ինչպես նաև Լրացուցիչ Պայմաններին, որոնք վերաբերում են հատուկ SMG-ի Բովանդակության մեջ), ապա SMG-ն ձեզ կտա անհատական, վերահասցեավորված, ոչ բացառիկ, անթույլատրելի և սահմանափակ լիցենզիա (առանց սուբլիցենզավորման իրավունքի)՝ բացառապես ձեր սեփական անձնական օգտագործման համար և սույն Պայմանների շրջանակներում SMG Ծառայություններից օգտվելու և SMG-ի Բովանդակությունը ներբեռնելու տպելու և/ կամ պատճենելու նպատակով։ Դուք ընդունում եք, որ SMG Ծառայությունների մեջ ներառված առևտրային գաղտնիքները և մտավոր սեփականությունը չի եղել, և չի կարող ձեզ արտոնագրվել կամ այլ կերպ բացահայտվել: Դուք ընդունում եք, որ SMG-ի Ծառայությունների էջերը գեներացնելու համար ստեղծված HTML կոդը պաշտպանված է SMG-ի հեղինակային իրավունքով: Բոլոր իրավունքները, որոնք ոչ լիարժեք են ներկայացված այստեղ, պաշտպանված են SMG-ի կողմից:

Դուք համաձայնում եք, որ քանի դեռ SMG-ն նախնական գրավոր թույլտվությամբ ձեզ թույլ չի տվել, ապա դուք <u>չեք</u> կարող՝

a. որևէ այլ աշխատանքի մեջ ընդգրկել ցանկացած SMG-ի Բովանդակություն (օրինակ, ձեր սեփական կայքէջում) կամ SMG Բովանդակությունը օգտագործել որևէ հասարակական կամ առեւտրային եղանակով,
b. փոփոխել որևէ հեղինակային իրավունք, ապրանքային նշան կամ մտավոր սեփականության այլ իրավունքներ, որոնք կարող են լինել SMG Բովանդակության մաս, կամ
c. «Խորքային հղում» որևէ SMG ծառայությանը (այսինքն՝ հղում SMG Ծառայություններից մեկի գլխավոր էջերից բացի որևէ այլ էջին):

SMG Ծառայություններում կամ դրանց միջոցով ցուցադրված ապրանքային նշանները, լոգոները և սպասարկման նշանները (այսուհետ՝ «Նշանները») պատկանում են SMG-ին կամ երրորդ կողմերին: Նշաններն արգելվում է օգտագործել առանց SMG-ի կամ երրորդ կողմի նախնական գրավոր թույլտվության։ Եթե ցանկանում եք տեղեկատվություն ստանալ այն մասին, թե ինչպես պետք է SMG Բովանդակությունից օգտվելու թույլտվություն ստանաք, գրեք privacyofficer@smg.com էլեկտրոնային հասցեին։

5. SMG ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼԸ

5.1. <u>Իրավասությունը.</u> SMG Ծառայությունները նախատեսված չեն այն տարիքի երեխաների համար, որոնց օրինական հիմքերով չի թույլատրվում իրենց երկրում համաձայնություն տալ իրենց անձնական տվյալների մշակման համար այն երկրում, որտեղ մենք գործում ենք: Եթե ձեր երկրի օրենքներով չափահաս չեք, ուրեմն չեք կարող օգտվել SMG-ի Ծառայություններից:

5.2. <u>Ձեր հաշիվը.</u> SMG Ծառայությունների որոշ առանձնահատկություններից օգտվելու համար ձեզնից կպահանջվի ստեղծել անձնական հաշիվ («**Հաշիվ**»): Դուք համաձայնում

եք տրամադրել, պահպանել և թարմացնել ճշգրիտ, արդիական ու ամբողջական տեղեկատվություն Ձեր մասին: Դուք համաձայնում եք չներկայացնել մեկ ուրիշ անձի կամ սուբյեկտի կամ խեղաթյուրել ձեր ինքնությունը կամ որևէ անձի կամ սուբյեկտի տվյալները, այդ թվում, օգտագործել ուրիշի անունը, գաղտնաբառը, կամ այլ հաշվի տվյալները, կամ մեկ ուրիշ օգտատիրոջ անունը, տեսքը, ձայնը, պատկերը կամ լուսանկարը: Դուք հետագայում համաձայնում եք մեզ privacyofficer@smg.com էլեկտրոնային փոստի միջոցով անհապաղ ծանուցել օգտատիրոջ ձեր անունը, գաղտնաբառը, այլ հաշվի տեղեկությունները կամ ցանկացած այլ խախտում, որի մասին ձեզ հայտնի է դարձել, SMG Ծառայություններից օգտվելուց հետո:

Ստեղծելով հաշիվ, դուք համաձայնում եք, որ SMG-ն կարող է կապվել ձեզ հետ՝ օգտագործելով հաշիվ ակտիվացնելուց Ձեր տրամադրած էլ.փոստի հասցեն:

Թույլ մի տվեք ուրիշներին օգտագործել ձեր հաշիվը: Դուք պատասխանատվություն եք կրում ձեր հաշվի ցանկացած օգտագործման համար, ներառյալ այլ անձանց կողմից ցանկացած օգտագործումը, որոնց դուք տրամադրել եք մուտք դեպի ձեր հաշիվը:

5.3. <u>Ձեր պարտականությունները՝</u>

SMG Ծառայություններից օգտվելու ձեր համաձայնագիրը միայն օրինական նպատակներով է: Դուք համաձայնում եք, որ դուք կօգտվեք SMG Ծառայություններից միայն օրինական նպատակներով: Դուք չեք օգտվի SMG Ծառայություններից որևէ կերպ, որով կարող են վնասել, անջատել, ծանրաբեռնել կամ վնասել SMG-ի սերվերները կամ ցանցերը կամ խանգարել ցանկացած այլ կողմի SMG Ծառայությունների օգտագործմանը և օգտվելուն:

Ձեր համաձայնագրով չի թույլատրվում օգտվել SMG Ծառայություններից անօրինական կամ չարտոնված նպատակների համար: Դուք նաև համաձայնում եք, որ չեք փորձի չարտոնագրված SMG Ծառայություններ ստանալ, մուտք գործել այլ օգտատերերի Հաշիվներ կամ SMG համակարգչային համակարգեր, ցանցեր կոտրել և գաղտնաբառեր ստանալ կամ այլ եղանակներով: Առանց վերոհիշյալներից որևէ մեկը սահմանափակելու, դուք համաձայնում եք, որ դուք չպետք է (և դուք չպետք է խրախուսեք կամ որևէ երրորդ կողմին թույլ տաք)՝

a. պատճենեք, փոփոխեք, հարմարեցնեք, թարգմանեք, վերափոխեք, վերծանեք կամ այլ կերպ փորձեք մուտք գործել SMG Ծառայություններ կամ SMG Բովանդակության որևէ մաս,
b. հեռացնեք հեղինակային իրավունքի, ապրանքային նշանի կամ SMG Ծառայությունների կամ SMG Բովանդակության սեփականության այլ իրավունքների ծանուցումներ,
c. շրջանցեք, անջատեք կամ այլ կերպ խոչընդոտեք մեր Ծառայությունների կամ գործառույթների անվտանգության կամ խարդախությունների կանխման հետ կապված առանձնահատկություններին, որոնք կանխարգելում կամ

սահմանափակում են ցանկացած SMG Բովանդակությունից օգտվելը կամ պատճենումը կամ մեր Ծառայությունների կամ SMG Բովանդակության օգտվելու սահմանափակումները,

d. չարաշահեք Ծառայությունները՝ գիտակցելով հնարավոր վիրուսների, Տրոյանների, ճիճուներ, տրամաբանական ռումբերի, լրտեսող ծրագրեր,ի չարամիտ ծրագրերի կամ այլ վնասակար կամ տեխնոլոգիական վնասակար նյութերի մասին,

e. օգտագործեք ցանկացած ռոբոտ, սարդ, որոնելու/ գտնելու ծրագիր, կայքերի կամ այլ ավտոմատացված սարքեր կամ միջոցներ՝ կայք մուտք գործելու, առբերելու, քանդելու կամ ճանաչելու SMG Ծառայությունների ցանկացած հատված,

f. հանձնեք վարձակալության, լիզինգով վերցրեք, փոխադրեք, վաճառեք, ենթալիզինգավորեք, հանձնարարեք, տարածեք, հրատարակեք, փոխանցեք կամ որևէ այլ կերպ տրամադրեք SMG Ծառայություններ, կամ ցանկացած գործառույթ կամ SMG Ծառայությունների գործառույթներ ցանկացած պատճառով, ցանկացած երրորդ կողմին, այդ թվում, SMG Ծառայությունները հասանելի դարձնեք, որտեղ ցանկացած պահի կարող է մուտք գործել մեկից ավելի սարք,

g. վերաձևակերպեք կամ փոփոխեք SMG Ծառայությունների մաս հանդիսացող ինտերնետային էջերի ցանկացած մաս,

h. ստեղծեք ավելի քան մեկ Հաշիվ՝ օգտագործելով որևէ ավտոմատացված եղանակ կամ կեղծ կամ խարդախ ճանապարհ, կամ

i. հավաքեք կամ պահեք ցանկացած այլ օգտատիրոջ անձնական տվյալները՝ առանց իր նախնական գրավոր համաձայնության:

SMG Ծառայություններից չարտոնված օգտվելու կամ չարաշահելու հետևանքները: Դուք համաձայնում եք, որ SMG Ծառայություններից օգտվելու իրավունքը դադարում է գործել այդ կանոններից որևէ մեկի խախտվելուց անմիջապես հետո, և SMG-ն իրավասու է դադարեցնել ձեր SMG Ծառայություններից օգտվելը՝ առանց հետագա ծանուցման, եթե դուք խախտում եք որևէ պահանջ կամ արգելք ինչպես սահմանված է սույն Պայմաններով կամ ցանկացած կիրառելի Լրացուցիչ Պայմաններում: Դուք հետագայում համաձայնում եք վերադարձնել կամ ոչնչացնել Կայքի նյութերի ցանկացած օրինակ, եթե մենք խնդրենք դա անել:

SMG Ծառայությունների չարտոնված օգտագործումը և չարաշահումը խստիվ արգելվում է. կախված հանգամանքներից, կարող է հանգեցնել քաղաքացիական հայցի պատճառված վնասի և/կամ քրեական հետապնդման: SMG-ն իրավունք է վերապահում հաղորդել իրավապահ մարմիններին այդ Պայմանների ցանկացած խախտման կամ SMG Ծառայությունների չարտոնված օգտագործման կամ չարաշահման մասին: SMG Ծառայությունների ցանկացած չարտոնված օգտագործման կամ չարաշահման դեպքում SMG Ծառայություններից օգտվելու իրավունքը դադարում է գործել, և SMG-ն կարող է կասեցնել ձեր մուտքը SMG ծառայություններ՝ առանց ծանուցման:

SMG ծառայությունների օգտագործման հետ կապված տուրքերի, վճարների և այլ ծախսերի համար ձեր պատասխանատվությունը (ներառյալ տեքստային հաղորդագրությունների վճարները): Դուք միայն պատասխանատվություն եք կրում բոլոր տուրքերի, վճարների և SMG Ծառայությունների օգտագործման հետ կապված այլ ծախսերի համար: Եթե դուք ձեր սմարթֆոնի, պլանշետի կամ այլ բջջային սարքի

միջոցով մուտք գործեք և օգտվեք SMG Ծառայություններից, դուք պետք է ունենաք անլար Wi-Fi ծառայություն կամ բջջային ծառայության գրանցված կապ: Որոշ ծառայություններից օգտվելու համար կարող է պահանջվել տեքստային հաղորդագրություններ (SMS կամ MMS): Դուք համաձայնում եք, որ դուք ամբողջությամբ պատասխանատվություն եք կրում ձեր բջջային կապի օպերատորից ստացված բոլոր հաղորդագրությունների և տվյալների համար: Մենք ցանկացած տեքստային հաղորդագրությունների ծառայությունների համար առանձին վճարներ չենք գանձում, դա մենք կարող ենք առաջարկել, սակայն կարող է կիրառվել հաղորդագրությունների և տվյալների ստացման սակագին: Բոլոր վճարումները հաշվարկվում և վճարվում են ձեր բջջային կապի օպերատորին: Սակագնային պլաններին և մանրամասներին ծանոթանալու համար դիմեք ձեր բջջային կապի օպերատորին: SMG-ն պատասխանատվություն չի կրում տեքստային հաղորդագրությունների ուղարկման հետ կապված ցանկացած ուշացումների կամ տեքստային հաղորդագրություններ ուղարկելու ձախողման համար, քանի որ հաջող ուղղարկման համար պատասխանատու է Ձեր բջջային կապի օպերատորը: Տեքստային հաղորդագրությունները միշտ չէ, որ կարող են հասանելի լինել բոլոր ոլորտներում ցանկացած ժամանակ:

Տեքստային հաղորդագրություններ ստանալու ձեր համաձայնության հետևանքները՝ Այն բանից հետո, երբ դուք գրանցվեք, մեր տեքստային հաղորդագրությունները ստանալու համար, Ձեզ տեքստային հաղորդագրություններ ուղարկելը կախված կլինի մեզ հետ ձեր գործարքների հաճախականությունից: **Համաձայնելով ստանալ տեքստային հաղորդագրություններ, դուք գիտակցում և ընդունում եք, որ SMG-ը տեքստային հաղորդագրություններ ուղարկելուց կարող է օգտագործել ավտոմատ հավաքելու համակարգ, և հետագայում գիտակցել, որ տեքստային հաղորդագրությունների ստացման համար ձեր համաձայնությունն այլևս չի պահանջվում, որպեսզի Ձեզ թույլատրվի ձեռք բերել ցանկացած ապրանք կամ ծառայություններ:**

5.4. <u>Հրապարակումներ</u>**:** SMG-ն կարող է ժամանակ առ ժամանակ Ձեզ և այլ օգտվողներին հնարավորություն ընձեռել կամավոր կերպով գրել կամ այլ կերպ ներկայացնել SMG Ծառայությունների վարկանիշը, կատարել առաջարկություններ, տեսազանգեր, գաղափարներ, գրառումներ, հասկացություններ կամ այլ տեղեկատվություն կամ նյութեր կամ ամբողջությամբ (այսուհետ՝«**Հրապարակումներ**»):

Դուք կրում եք, և պետք է իրականացնեք միանձնյա պատասխանատվություն ձեր Հրապարակումների և հետևանքների համար, դրանց ուղարկելու և տեղադրելու համար: Դուք միանձնյա պատասխանատվություն եք կրում ձեր Հրապարակումների հեղինակային իրավունքի խախտման, սեփականության իրավունքի կամ Ձեր Հրապարակման արդյունքում առաջացած ցանկացած այլ նյութական վնասի համար: Հրապարակումներ կատարելիս կամ ուղարկելուց՝ դուք պետք է հնարավորինս սահմանափակեք ձեր տրամադրած անձնական տվյալների չափը, քանի որ Հրապարակումները կարող են կապված լինել ձեզ հետ՝ կախված ձեր տրամադրած մանրամասներից:

SMG-ի (և/կամ մեր կողմից լիազորված անձանց) կամ SMG-ի Ծառայությունների ցանկացած տարածքում Հրապարակումներ ուղարկելով, հղելով կամ փոխանցելով, դուք ինքնաբերաբար տրամադրում եք կամ երաշխավորում եք, որ ձեր կամ ձեր կողմից լիազորված օգտատիրոջ կողմից տրամադրված Հրապարակումները աշխարհում որևէ այլ հեղինակներ չունեն, բացառիկ չեն, ենթալիցենզավորվող (բազմակի թիրախներով), փոխանցվող, ազատ շրջանառվող, հավերժական, անվերադարձ օգտագործման իրավունքով, վերարտադրվող, ենթալիցենզավորվող (բազմակի թիրախներով), տարածվող, հավելյալ աշխատանքներ կատարելու հնարավորությամբ, ձեր Հրապարակումները (ամբողջությամբ կամ մասնակիորեն) վերլուծելու և հրապարակելու արդիական կամ զարգացած ցանկացած լրատվամիջոցում՝ ոչ առևտրային կամ այլ կերպ՝ առանց ձեզ փոխհատուցման ինչ-որ նպատակով: Այլ կերպ ասած, SMG-ն ավտոմատ իրավունք է ստանում օգտագործել ձեր Հրապարակումները, ներառյալ նրանց վերարտադրությունը, հրապարակումը կամ հեռարձակումը ցանկացած վայրում, ցանկացած պահի, ցանկացած միջավայրում և ցանկացած նպատակով, առանց վճարելու որևէ պարտավորության կամ որևէ պարտականության ձեր առջև: Դուք նաև թույլատրում եք որևէ այլ օգտվողին մուտք գործել, դիտել, պահել կամ վերարտադրել ձեր Հրապարակումները՝ անձնական օգտագործման համար: Սույնով դուք SMG-ին (և/կամ մեր կողմից լիազորված անձանց) իրավունք եք տալիս օգտագործել ձեր Հրապարակումները ցանկացած նպատակներով, ցանկացած վայրում: Ոչ մի պարագայում դուք որևէ իրավունք չունեք ցանկացած տեսակի վճարման, եթե SMG-ն (կամ մեր կողմից լիազորված անձինք) օգտագործում է ձեր Հրապարակումներից որևէ մեկը: Բոլոր Հրապարակումները համարվում են գաղտնազերծված և չլիցենզավորված:

Ձեր կողմից գրառված Հրապարակումները կարող են հանրամատչելի լինել: Դուք ընդունում եք, որ ձեր Հրապարակումներից որևէ մեկի վերաբերյալ գաղտնիության հետ կապված որևէ ակնկալիք չունեք: Դուք հետագայում նաև ընդունում եք, որ ձեր Հրապարակումները կատարել եք կամավոր և ձեր սեփական կամքով: SMG-ի, SMG-ի հաճախորդների կամ ցանկացած այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձի վերաբերյալ տեղեկատվություն, մեկնաբանություններ կամ այլ Բովանդակության տեղեկատվություն հաղորդելուց պետք է ողջամիտ լինել: Ձեր կողմից կատարված ցանկացած զրպարտությունների համար Դուք կարող եք պատասխանատվություն կրել այլ օգտվողներին, SMG-ին կամ երրորդ կողմին վնաս հասցնելու համար: Դուք կարող եք Հրապարակումներ կատարել ձեր օգտագործողի անունով կամ կեղծանունով, եթե այլ բան նախատեսված չէ ձեր երկրի գործող օրենսդրությամբ:

SMG-ն պատասխանատվություն չի կրում օգտվողների կողմից առաջադրված ցանկացած Հրապարակումների համար, նույնիսկ եթե այդպիսի Հրապարակումները զրպարտություն են կամ քրեորեն պատժելի են: SMG-ն պատասխանատվություն չի կրում և չի կիսում կարծիքները, խորհուրդները կամ առաջարկությունները, որոնք տեղադրված կամ, այլ կերպ ասած, հրապարակված են SMG Ծառայություններում կամ նրանց միջոցով: SMG-ն մասնավորապես հրաժարվում է նմանօրինակ Հրապարակումների հետ կապված ցանկացած պատասխանատվությունից: SMG-ն չի հաստատում և ոչ էլ ստուգում է օգտագործողների իսկությունը, ծագումը կամ հնարավորությունները, կամ նրանց կողմից SMG Ծառայությունների միջոցով

ուղարկվող տեղեկատվությունը: Հետևաբար, SMG-ն կոչ է անում ձեզ Հրապարակումները պատրաստելիս գործել ողջամտիտ և սթափ դատել:

Հրապարակում անելուց դուք համաձայնում եք, ներկայացնում և երաշխավորում, որ Ձեր Հրապարակումը.

a. ճշմարիտ է և ճշգրիտ,
b. վերաբերում է SMG Ծառայությունների արտոնագրած նյութին կամ թեմային,
c. չի խախտում, իրեն չի վերագրում և ապօրինի չի յուրացնում երրորդ կողմի հեղինակային իրավունքները, ապրանքային նշանը, արտոնագիրը, գրական, առևտրային գաղտնիքը, գաղտնիությունը, հրապարակայնությունը, գույքային, պայմանագրային կամ այլ իրավունքները,
d. չի պարունակում տեղեկություններ, որոնք բացահայտում են որևէ մեկին կամ նրա մասին տեղեկատվությունը, որը ներառում է ինչ-որ մեկի անձնական տվյալները, եթե դուք չունեք այդ անձի նախնական գրավոր համաձայնությունը,
e. ինչ-որ երրորդ կողմի կամ նրա արտադրանքի կամ ծառայությունների վերաբերյալ անհիմն հայտարարություններ չի անում,
f. չի պարունակում ինչ-որ վարկաբեկող, զրպարտող, կեղծ, ապակողմնորոշող, գռեհիկ, անպարկեշտ, պոռնոգրաֆիկ, բռնի, մոլեռանդ, սեռական բնույթի, ատելության, վիրավորական, սպառնացող, ոտնձգող, հակասոցիալական, սեռական կամ ռասայական վիրավորական մեկնաբանություններ կամ այլ բովանդակություն, որը կամ վիրավորում է կամ ողջամտորեն դատելով կարող է վիրավորել ցանկացած անձի կամ կազմակերպության,
g. անօրինական չի համարվում և չի խրախուսում կամ պաշտպանում անօրինական գործունեությունը կամ չի քննարկում ապօրինի գործողությունները՝ դրանք կատարելու մտադրությամբ,
h. ոչ կոմերցիոն է կամ բիզնեսի հետ կապ չունի և չի ազդում որևէ ապրանքի կամ ծառայության վաճառքի կամ առաջարկի (շահույթ ստանալու կամ չստանալու համար) վրա, կամ ուրիշներին խնդրելու վրա (այդ թվում՝ նվիրատվությունների և ներդնումների խնդրանքը),
i. չի պարունակում որևէ վիրուս կամ այլ վնասակար բաղադրիչ, կամ չի խախտում, չի վատթարացնում ու չի վնասում SMG Ծառայություններին կամ միացված ցանցին, ինչպես նաև չի խանգարում ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից SMG Ծառայությունների օգտագործմումը և .
j. համապատասխանում է Ձեր Հրապարակումներին առնչվող բոլոր գործող օրենքներին, կանոնակարգերին, կանոններին, քաղաքականությանը և պայմանագրային դրույթներին, ինչպես նաև այն SMG Ծառայություններին, որոնց միջոցով դուք կամ տեղադրում կամ կիսվում եք Ձեր Հրապարակումներով՝ ներառյալ տարիքային սահմանափակումները:

Դուք ընդունում և համաձայնում եք, որ SMG-ն իրավունք ունի, բայց պարտավորված չէ փոփոխություն կատարել, հեռացնել կամ մերժել կամ տեղադրել ինչ-որ Հրապարակում: SMG-ն պատասխանատվություն չի կրում և որևէ պատասխանատվություն չի ակընկալում ձեր կամ ինչ-որ երրորդ կողմի հրապարակած որևէ Հրապարակման

համար: SMG-ն չի կարող և չի երաշխավորում, որ բոլոր օգտվողները համապատասխանում են այդ դրույթներին, և այսպիսով ձեր և SMG-ի միջև փոխհարաբերություններում դուք ստանձնում եք հնարավոր վնասները կամ վնասվածքները ձեր սեփական կամքով, որոնք կարող են առաջանալ ցանկացած անհամապատասխանության արդյունքում:

SMG-ն խորհուրդ է տալիս ձեզ նվազագույնի հասցնել Ձեր Հրապարակումների ցանկացած անձնական տվյալների բացահայտումը, քանի որ այլ մարդիկ կարող են ձեր Հրապարակումներում տեսնել և օգտագործել ձեր անձնական տվյալները: SMG-ն պատասխանատվություն չի կրում այն տեղեկությունների համար, որոնցով դուք կիսվում եք Հրապարակումների միջոցով:

6. ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ԿԱՅՔԵՐԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

SMG Ծառայությունները կարող են պարունակել երրորդ կողմի կայքերի և ծառայությունների, այդ թվում `սոցիալական լրատվամիջոցների (այսուհետ՝ **«Կցորդով Ծառայություններ»**) հղումներ: «Կցորդով Ծառայությունները» SMG-ի վերահսկողության տակ չեն գտնվում և SMG-ն պատասխանատվություն չի կրում «Կցորդով Ծառայությունների» համար, կամ Ծառայությունից ցանկացած հաղորդակցման ձևով ստացված ցանկացած տեղեկատվություն կամ ցանկացած Հրապարակում: Հղման կցումը չի նշանակում SMG-ի «Կցորդով Ծառայությունների» կամ ինչ-որ հարակից կապի ծառայության օպերատորների ընդունում: SMG-ն չի ուսումնասիրում, ստուգում կամ վերահսկում «Կցորդով Ծառայությունները»: SMG-ն «Կցորդով Ծառայությունների» հղումներ է տրամադրում միայն ձեր հարմարության համար: Դուք ընդունում եք «Կցորդով Ծառայությունները»՝ ձեր սեփական կամքով:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՈՒՄԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

SMG-ն երաշխավորում է, որ SMG օրինական հիմունքներով գործում է սույն Պայմաններով և ունի դրա օրինական լիազորությունը: Դուք երաշխավորում եք, որ օրինական հիմունքներով եք կնքել սույն Պայմանները և ունեք դրա իրավունքը:

ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՅՆ ԴԵՊՔԵՐԻ, ԵՐԲ ՎԵՐԸ ՆՇՎԱԾ SMG ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ ԵՆ «ԻՆՉՊԵՍ ՈՐ ԿԱ» ԵՎ «ԻՆՉՊԵՍ ՈՐ ՀԱՍԱՆԵԼԻ Է» ՝ ԱՌԱՆՑ ՈՐԵՎԷ ՏԵՍԱԿԻ ԵՐԱՇԽԻՔԻ ԿԱՄ ԵՆԹԱԴՐԱԲԱՐ:

SMG-ը ոչ մի Հրապարակում կամ երաշխիք չի տրամադրում SMG-ի Բովանդակության արդյունքների ճշգրտության, հուսալիության, ամբողջականության կամ ժամանակի վերաբերյալ, որոնք կօգտագործվեն SMG Ծառայությունների և SMG Բովանդակության օգտագործման ժամանակ: Դուք օգտվում եք SMG Ծառայություններից և Բովանդակությունից ձեր սեփական կամքով: Պարբերաբար փոփոխություններ են կատարվում SMG Ծառայություններում և SMG Բովանդակության մեջ: Այդ փոփոխությունները կարող են կատարվել ցանկացած ժամանակ: SMG Ծառայությունների շրջանակներում ինչ-որ Բովանդակություն կարող է տրամադրվել երրորդ անձանց կողմից:

SMG-ն պատասխանատվություն չի կրում որևէ երրորդ կողմի տրամադրած բովանդակության համար:

SMG ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ SMG ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ ԵՆ «ԻՆՉՊԵՍ ՈՐ ԿԱ» ՝ ԱՌԱՆՑ ՈՐԵՎԷ ՏԵՍԱԿԻ ԵՐԱՇԽԻՔԻ: ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔՈՎ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ԿԻՐԱՌԵԼԻ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ, SMG ԲԱՑԱՀԱՅՏ ԿԵՐՊՈՎ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է ՑԱՆԿԱՑԱԾ ՏԵՍԱԿԻ ԲՈԼՈՐ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻՑ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ԲՈԼՈՐ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅՈՒՆԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԿԱՐԳԱՎՈՐՎԵԼԸ ԿԱՄ ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏՎԵԼԸ, ԱՆԽԱՓԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԵՆԹԱԴՐՅԱԼ ՑԱՆԿԱՑԱԾ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՄ ԱՌԵՎՏՐԻ ԲՈԼՈՐ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ:

SMG ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ, ՈՐ (Ա) SMG ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՆ ՁԵՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ, (Բ) SMG ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԼԻՆԻ ԱՆԽԱՓԱՆ ԿԱՄ ԱՌԱՆՑ ՎԻՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՍԽԱԼՆԵՐԻ, ԿԱՄ (Գ) ՍԽԱԼՆԵՐԸ ԿՇՏԿՎԵՆ: ԵԹԵ ՁԵՐ SMG ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԿԱՄ SMG ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԳԵՑՆՈՒՄ Է ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿՈՐՍՏԻ, ԱՅԴ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԱՐ SMG-ն ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ: SMG-ն ԿԱՄ ՆՐԱՆՑ ԼԻԱԶՈՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՑԱՆԿԱՑԱԾ ԲԱՆԱՎՈՐ ԿԱՄ ԳՐԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԻՔ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼ: ՈՐՈՇ ՕՐԵՆՔՆԵՐ ԹՈՒՅԼ ՉԵՆ ՏԱԼԻՍ ԵՆԹԱԴՐՎՈՂ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԲԱՑԱՌՈՒՄ, ԻՆՉԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է, ՈՐ ՈՐՈՇ ԿԱՄ ԲՈԼՈՐ ՎԵՐԸ ՆՇՎԱԾ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՁԵԶ ՉՎԵՐԱԲԵՐՎԵՆ:

SMG ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴՈՒՔ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՁԵՐ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՄՔՈՎ : Եթե Դուք դժգոհ եք SMG Ծառայություններից, ներառյալ՝ SMG Ծառայությունների ցանկացած Բովանդակությունը, ձեզ մնում է միայն դադարեցնել SMG Ծառայություններից օգտվելը:

ԴՈՒՔ ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ԵՔ, ՈՐ ՈՉ ՄԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ SMG ԿԱՄ ՑԱՆԿԱՑԱԾ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՉՊԵՏՔ Է ՎԿԱՅԱԿՈՉԵՔ ՈՐԵՎԷ SMG ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ (Ա) ՑԱՆԿԱՑԱԾ ՏԵՍԱԿԻ ՎՆԱՍ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՆՈՒՂՂԱԿԻ, ՀԱՏՈՒԿ, ՕՐԻՆԱԿԵԼԻ, ՊԱՏԱՀԱԿԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՄ ՎՆԱՍՆԵՐԻ ԿԱՄ ՑԱՆԿԱՑԱԾ ԱՅԼ ՏԻՊԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ (ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԿՈՐՍՏԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆԵՐԱՌՅԱԼ, ԲԱՑՑ ՈՉ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱՄ ԵԿԱՄՏԻ, ԿԱՄ ԲԻԶՆԵՍԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ), ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ, ՀԻՄՆՎԵԼՈՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԵՎԷ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ, ՉՊԱՀԱՆՋԵԼ SMG ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՐԱՇԽԻՔԻ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, ԽԻՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ, (ՆԵՐԱՌՅԱԼ ԲՆՈՒՅԹԸ ԿԱՄ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ) ԿԱՄ ՑԱՆԿԱՑԱԾ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ՆՈՒՅՆԻՍԿ ԵԹԵ SMG ԶԳՈՒՇԱՑՎԵԼ Է ՆՄԱՆ ՎՆԱՍՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ԿԱՄ (Բ) ՑԱՆԿԱՑԱԾ ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՄ ՎՆԱՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԾԱԳՈՂ, ՁԵՐ SMG ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ: ՍՈՒՅՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆԻՑ

ՀՐԱԺԱՐՎԵԼԸ ՉԻ ԱԶԱՏՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ, ՈՐԸ ԿՈՊԻՏ ԱՆՓՈՒԹՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾ ՎԱՐՔԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՊԱՏՃԱՌ Է ԵՎ ԱՐԳԵԼՎԱԾ Է ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ:
ԵԹԵ ԻՆՉ-ՈՐ ՊԱՏՃԱՌՈՎ ՏՎՅԱԼ 7 ԲԱԺՆՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԿԱՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ՉԿԻՐԱՌՎԻ, ԿԱՄ ԻՆՉ-ՈՐ ՊԱՏՃԱՌՈՎ ՉՈՒՆԵՆԱ ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺ, SMG ՑԱՆԿԱՑԱԾ ՏԵՍԱԿԻ ՎՆԱՍԻ ՀԱՍՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՍՈՒՅՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՎ ԿՍԱՀՄԱՆՎԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՏՈՒՅԺԸ՝ 1000 ԱՄՆ ԴՈԼԱՐ:

Դուք ընդունում և համաձայնում եք, որ պատասխանատվության վերոնշյալ սահմանափակումները, ինչպես նաև սույն Պայմանների այլ դրույթները, պատասխանատվությունը սահմանափակող պայմաններ են, կարևոր պայմաններ են, և SMG-ն չի պատրաստվի Ձեզ տրամադրել այդ պայմաններում սահմանված իրավունքները՝ ձեր պատասխանատվության վերը նշված սահմանափակումներն ընդունելու համար:

ԵԹԵ ԴՈՒՔ ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ԲՆԱԿԻՉ ԵՔ, ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՀՐԱԺԱՐՎԵԼ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ, ՈՐ ՆՇՎԱԾ ԵՆ ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ, ԲԱԺԻՆ 1542, ՈՐՈՒՄ ԱՍՎԱԾ Է. «ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՎԵԼԸ ՉԻ ՏԱՐԱԾՎՈՒՄ ՀԱՅՑԵՐԻ ՎՐԱ, ՈՐՈՆՑ ՄԱՍԻՆ ՊԱՐՏԱՏԵՐԸ ՉԻ ԻՄԱՑԵԼ ԿԱՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ՊԱՀԻՆ ՉԻ ԿԱՍԿԱԾԵԼ ՆՐԱՆՑ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ԱՅԴ ՊԱՀԻՆ ՆՐԱ ՕԳՏԻՆ ԿԻՐԱՌՄԱՄԲ, ՈՐԸ, ԵԹԵ ՀԱՅՏՆԻ ԼԻՆԵՐ, ԷԱԿԱՆՈՐԵՆ ԿԱՐՈՂ ԷՐ ԱԶԴԵԼ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՀԵՏ ՆՐԱ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ»:

8. ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ

Դուք համաձայնվուն եք, ձեր սեփական հաշվին, պաշտպանել, փոխհատուցել և փակել SMG-ի և նրա հաճախորդների, տնօրենների, պաշտոնյաների, աշխատակիցների և գործակալների բոլոր վնասները, պարտավորությունները, պահանջները, գործողությունները կամ պահանջները, այդ թվում, առանց սահմանափակման, ցանկացած դրամական վնասները, ծախսերը, պաշտպանության համար վճարները, ներառյալ՝ ողջամիտ փաստաբանական և հաշվապահական վճարները, երրորդ կողմից ընդդեմ SMG-ի հարուցված գործերը, որ ծագել են. (ա) Հրապարակումներից, (բ) SMG Ծառայություններից օգտվելուց կամ (գ) այդ պայմաններից որևէ մեկի խախտումից, երրորդ անձանց իրավունքների կամ գործող օրենսդրության խախտումից: Փոխհատուցման սույն դրույթը չի կիրառվում այնքանով, որքանով դա արգելված է գործող օրենսդրությամբ: SMG-ն իրեն իրավունք է վերապահում իր հաշվին հարուցել սույն Համաձայնագրին համապատասխան փոխհատուցման ենթակա ցանկացած գործ և իրականացնել հարցի բացառիկ պաշտպանություն և վերահսկողություն: SMG-ի իրավունքների ու պարտականությունների ցանկացած կարգավորում չի կարող կատարվել առանց SMG-ի նախնական գրավոր համաձայնության:

9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

Բացառությամբ հեղինակային իրավունքների կամ պարտականությունների հետ կապված վեճերը, անհատների պահանջների խախտումը, որոնք կարգավորվում են ԱՄՆ-ի դաշնային

օրենքով, ձեր և SMG-ի միջև ծագող ցանկացած վեճերը, որոնք կարգավորվում և հասկացվում և կիրարկվում են Միսսուրի նահանգի (Միացյալ Նահանգների) օրենքների համաձայն՝ անկախ Ձեր ծննդավայրից կամ ծառայությունների մատչելիությունից և օրենքի դրույթների հակասությունից: Բոլոր նման վեճերը պետք է լուծվեն Միսսուրի նահանգի օրենքների համաձայն, որոնք կտարածվեն Միսսուրի նահանգում կազմված և կատարված պայմանագրերի վրա: Դուք և SMG-ն համաձայնում եք, որ Միավորված Ազգերի Կազմակերպության Միջազգային վաճառքի պայմանագրերի մասին կոնվենցիան չի տարածվում սույն Պայմանները կազմելու կամ լուծելու վրա:

ԴՈՒՔ ԵՎ SMG-Ն ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ԵՔ, ՈՐ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ ԿԱՐՈՂ Է ՊԱՀԱՆՋՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ՄԻԱՅՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ, ԱՅԼ ՈՉ ԹԵ ՅԱՆԿԱՑԱԾ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ԻՆՉ-ՈՐ ԵՆԹԱԴՐՎՈՂ ԽՄԲԻ ՀԱՅՑՎՈՐ ԿԱՄ ԱՆԴԱՄ ԿԱՄ ՀԱՅՑՎՈՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ:

ԴՈՒՔ ԵՎ SMG-Ն ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ԵՔ, ՈՐ ԲՈԼՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԼՈՒԾՎԵՆ 9-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՇՎԱԾ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ, ԵՎ ԴՈՒՔ ԵՎ SMG-Ն ԿՀՐԱԺԱՐՎԵՔ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՆՄԱՆԱՏԻՊ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ: ԵԹԵ ՅԱՆԿԱՆԱՔ ԴԻՄԵԼ ԴԱՏԱՐԱՆ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՕՐԻՆԱԿ ԲԱՑԱՀԱՅՏ ԸՆԴՈՒՆԵԼԸ, ԿԱՐՈՂ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԵԼ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԿՈՂՄԻՑ:

Յանկացած վեճ, որ ծագում է Ձեր և SMG-ի, նրա գործակալների, աշխատակիցների, պաշտոնատար անձանց, տնօրենների, իրավահաջորդ կառույցների, դուստր կազմակերպությունների կամ ստորաբաժանումների միջև, որոնք առաջանում են սույն Պայմաններից և դրանց լուսաբանումից կամ խախտումից, դադարելուց կամ վավերացումից, ներառյալ այդ Պայմանների վավերականության, շրջանակի կամ կիրառելիության մասին վեճերը, ենթակա են հաշտարարային (այսուհետ՝ «**Քողարկվող վեճեր**») լուծման՝ Միսսուրի նահանգի Ամերիկյան հաշտարարական ասոցիացիայի (AAA) պարտադիր հաշտարարի կողմից իր կանոններին համապատասխան (ներառյալ սպառողների հետ կապված վեճերի կարգն ու ընթացակարգերը) ՝ ուժի մեջ մտնելու օրվանից: Նախքան որևէ հաշտարարի դիմելը, նախաձեռնող կողմը մյուս կողմին պետք է տրամադրի նախնական գրավոր ծանուցում հաշտարարին դիմելու մտադրության մասին՝ ոչ պակաս, քան 60 օրվա ընթացքում: SMG-ն նման ծանուցում կուղարկի ձեր էլեկտրոնային փոստի հասցեին, որը դուք նշել եք ձեր հաշիվը բացելուց կամ մեկ ուրիշ էլեկտրոնային փոստի հասցեին, որը Դուք այլ եղանակով եք տրամադրել SMG-ին: Նմանատիպ ծանուցումները դուք պետք է ուղարկեք SMG-ի privacyofficer@smg.com էլեկտրոնային փոստի հասցեին:

Գրանցման, կազմակերպչական և հաշտարարի բոլոր վճարները կկիրառվեն AAA-ի կանոններով: Եթե, այնուամենայնիվ, Դուք ի վիճակի եք ցույց տալ, որ հաշտարարի ծախսերը համեմատած դատական ծախսերի հետ ձեզ համար թանկ արժեն, SMG-ն կվճարի գրանցման, կազմակերպման և հաշտարարի հետ կապված ծախսերը, քանի որ հաշտարարրը անհրաժեշտ է համարում հաշվի առնել այն հանգամանքը, որ հաշտարարի ծախսերը ձեզ համար զգալի են: Եթե հաշտարարը որոշի, որ հաշտարարին ներկայացված հայցը անհիմն է, ապա դուք պետք է համաձայնեք SMG-ին փոխհատուցել հաշտարարի հետ կապված բոլոր գումարները, որ SMG-ն վճարել է ձեր անունից, որը դուք պարտավոր եք վճարել AAA-ի կանոնների համաձայն:

Ըստ AAA-ի ֆինանսական հաշտարարի կանոնների, կընտրվի մեկ արբիտր: Հաշտարարի գործունեությունը պետք է իրականացվի անգլերեն լեզվով: Հաշտարարը իրավունք ունի տրամադրել իրավական միջոցներ, որոնք դատարանում օրենքով սահմանված են և հաշտարարի ցանկացած որոշում պետք է լինի վերջնական և պարտադիր յուրաքանչյուր կողմի համար և ցանկացած իրավասության դատարանում կարող է որպես լուծում առաջարկվել: Հաշտարարը, այնուամենայնիվ, չի ունենա պատժելու կամ տուգանելու իրավունք, մի իրավունք, որից յուրաքանչյուր կողմ հրաժարվել է: Հաշտարարը պարտավոր է իրականացնել գործող օրենքի և սույն Պայմանների դրույթները. դրա չկատարելը կդիտվի որպես հաշտարարի լիազորությունների չարաշահում և կարող է դառնալ դատական գործի վերանայման հիմք: Հաշտարարի որոշումը պետք է ուղեկցվի գրավոր բացատրություններով և պետք է գաղտնի մնա: SMG-ն և դուք համաձայնում եք, որ ցանկացած Քողարկվող վեճ միջնորդ դատարան կներկայացվի միայն անհատական հիմունքներով: **Ո՛Չ SMG-ն, ԵՎ Ո՛Չ ԵԼ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՔ ՀԱՇՏԱՐԱՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՈՐԵՎԷ ՔՈՂԱՐԿՎՈՂ ՎԵՃ ՈՐՊԵՍ ԴԱՍԱԿԱՐԳԻ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԿԱՄ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ԱՅՆ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼ ՈՐՊԵՍ ԴԱՍԱԿԱՐԳԻ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԿԱՄ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ:** Եթե սույն բաժնի 9-րդ կետում նշված հաշտարարի համաձայնության որևէ դրույթը համարվում է ուժը կորցրած, ապա անվավեր դրույթը կջնջվի և հաշտարարի մնացած պայմանները կգործեն (բայց ոչ մի դեպքում չի լինի հաշտարարի դասակարգի, ներկայացուցչի կամ անձնական իրավաբանի ընդհանուր գործողություն): Անկախ օրենսդրական ակտից կամ օրենքնից, որը հակասում է այդ պայմաններին, ծանուցվում է սույն Պայմաններից բխող կամ դրանց հետ կապված ցանկացած պահանջի մասին, որը պետք է կայացվի այդ պահանջն առաջանալուց մեկ (1) տարի հետո կամ ընդմիշտ կասեցվի: Սույն բաժնի 9-րդ կետի նպատակների համար սույն Պայմանները և դրանց հետ կապված գործարքները կառավարվում են Դաշնային հաշտարարի մասին օրենքով (Միացյալ Նահանգների օրենսգրքի 9-րդ բաժին, §§ 1-16) («FAA») :

Նշում. Համաձայնելով սույն Պայմանների հետ, դուք փաստացի համաձայնում եք ԱՄՆ-ից դուրս գտնվող ցանկացած գործող օրենքների հետ, այսինքն, SMG-ի դեմ ցանկացած հայց կամ գործողություն պետք է գործի ձեր երկրի օրենքների պահանջների կամ գործողությունների համաձայն. այսպիսով, դա միակ վայրն է, որտեղ ձեր վեճերն ընկալելի են և հնարավոր է դրանց ընթացք տալ՝ համաձայն Միացյալ Նահանգներում գործող 9-րդ բաժնի պայմանների:

10. ՊԱՐԳԵՎՆԵՐ

Ժամանակ առ ժամանակ SMG-ն կարող է ձեզ հնարավորություն ընձեռել ստանալու պարգևներ, ինչպիսիք են՝ պարգևավճարները, բալերը, զեղչերը կամ հատուկ առաջարկները (այսուհետ՝ **«Պարգևներ»**): Երբ SMG Ծառայությունների Պարգևները ձեզ համար հասանելի կդառնան, մենք կտեղեկացնենք ձեզ: Պարգևների շահույթը և վավերականության ժամկետը կարող են տարբերվել, այնպես որ անհրաժեշտ է ստուգել յուրաքանչյուր Պարգևի մանրամասները: SurveyMini-ի համար, իննսուն (90) օր անգործությունից հետո, ձեր Պարգևի ժամկետը կլրանա: Ձեր Պարգևները ձեր անձնական օգտագործման համար են: Դուք չեք կարող փոխանցել, ուղարկել, վաճառել, օտարել կամ փոխանակել ձեր Պարգևները:

Եթե օրենքով նախատեսված չէ, Պարգևները հնարավոր չէ փոխանակել դրամական միջոցներով և հնարավոր չէ համակցել SMG-ի կամ ցանկացած այլ հաճախորդի գործողությամբ, առաջարկով կամ զեղչով: Պարգևները հատուցելուց հետո, ցանկացած պատճառով ոչ մի վարկ կամ փոխհատուցում չի տրվելու: SMG-ն իրավունք ունի փոփոխել, դադարեցնել կամ կասեցնել Պարգևների տրամադրումը: Դուք համաձայնում եք SMG-ի որոշումների հետ, որոնք վերջնական են և պարտադիր են բոլոր հարցերում, որոնք վերաբերում են Պարգևներին:

11. ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ԹԱՐՄԱՑՈՒՄՆԵՐԸ

Մենք կարող ենք ժամանակ առ ժամանակ (մեր հայեցողությամբ) թարմացնել, մշակել և տրամադրել բջջային հավելվածները, որոնք կարող են ներառել կատարելագործում, սխալների ուղղում, շտկում և այլ սխալների ուղղում և/կամ նորույթներ (այսուհետ՝ «**Թարմացումներ**»): Թարմացումները կարող են նաև փոփոխել կամ ամբողջությամբ ջնջել որոշակի գործառույթներ: Դուք համաձայնում եք, որ SMG-ն պարտավորություն չունի տրամադրել թարմացումներ կամ շարունակել տրամադրել կամ միացնել նորույթները կամ գործառույթները:

Կախված ձեր բջջային սարքի կարգավորումներից, երբ ձեր բջջային սարքը միացված է ինտերնետին. (ա) Թարմացումներն ինքնաբերաբար կարող են ներբեռնվել և տեղադրվել, կամ (բ) դուք կարող եք ծանուցումներ ստանալ, որը կհուշի, որ անհրաժեշտ է մատչելի եղանակով ներբեռնել և տեղադրել Թարմացումները:

Արագ ներբեռնեք եւ տեղադրեք բոլոր թարմացումները: Հակառակ դեպքում, SMG-ի Ծառայությունները մասամբ չեն կարող պատշաճ կերպով գործել: Դուք հետագայում կհամաձայնեցնեք, որ բոլոր Թարմացումները համարվում են SMG Ծառայությունների մասը և համապատասխանում են սույն Պայմանների բոլոր պահանջներին և պայմաններին:

12. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄ

SMG Ծառայություններից ձեր օգտվելը և (կամ) գրանցվելու Ձեր ընտրած եղանակը կնշանակի մեզ հետ էլեկտրոնային եղանակով պայմանագիր կնքելու ձեր համաձայնությունը:

13. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ/ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

SMG Ծառայություններն ու SMG Բովանդակությունը հիմնադրվել են Միացյալ Նահանգներում գտնվող Միսսուրի նահանգում և, չնայած Միացյալ Նահանգներից դուրս գտնվող անձանց յուրաքանչյուրին կարող է տրամադրվել օգտվելու հնարավորությունը, դուք ընդունում եք, որ իրավաբանական կամ գործառնական պատճառներով ձեր իրավասության տակ չեք կարող մուտք գործել SMG Ծառայություններ կամ SMG Բովանդակություն: Եթե Դուք SMG Ծառայություններ կամ SMG Բովանդակություն եք մուտք գործում ԱՄՆ-ից դուրս, դուք պատասխանատվություն եք կրում տեղական օրենքներով, այդ թվում՝ SMG Բովանդակության ներմուծման, արտահանման կամ վերաարտահանման վերաբերյալ տեղական օրենքներին համապատասխանելու համար:

SMG-ի Ծառայությունները կարող են ենթարկվել որոշ երկրների արտահանմանյան վերահսկման օրենքներին, ներառյալ Միացյալ Նահանգների արտահանման մասին օրենքը

և դրա հետ կապված կանոնները: Դուք համաձայնում եք, որ կենթարկվեք սույն օրենքներին և կանոններին, և դուք SMG Ծառայությունները մատչելի դարձնելու նպատակով մատուցվող ծառայությունները ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեք արտահանի, վերաարտահանի կամ հեռացնի դեպի ցանկացած երկիր, որտեղ արտահանումը, վերաարտահանումը կամ հեռացումը արգելվում է օրենքով, կանոնով կամ կարգով: Դուք հետագայում համաձայնում եք, որ կհամապատասխանեք բոլոր գործող դաշնային օրենքներին, կանոնակարգերին և կանոններին և կկատարեք բոլոր անհրաժեշտ ձեռնարկումները (ներառյալ արտահանման արտոնագիր ստանալու կամ որևէ այլ պետական արտոնագիր ստանալու), մինչև արտահանելը, վերաարտահանելը, ազատելը կամ այլ կերպ ԱՄՆ-ն SMG Ծառայություններ մատուցելը: Բացի այդ, ցանկացած SMG Բովանդակություն ներբեռնելուց Դուք համաձայնում եք, որ չեք գտնվում այն երկրում, որտեղ այն արգելված է, և չեք գտնվում ԱՄՆ առևտրի դեպարտամենտի դիմումների մերժման ցուցակում, Կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց ցուցակում և մուտքի արգելք ստացած անձանց ցուցակում:

14. ԱՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

SMG Ծառայությունները առևտրային համակարգչային ծրագրեր են, ինչպես սահմանված է Դաշնային կանոնակարգերի օրենսգրքի 48 հոդվ, §2.101: Հետևաբար, եթե դուք ԱՄՆ կառավարության կամ որևէ կապալառուի գործակալ եք, ապա ստանում եք այն իրավունքները, որոնք վերաբերում են SMG Ծառայություններին, որոնք տրվում են լիցենզիա ունեցող բոլոր մյուս օգտագործողներին, համաձայն (ա) Դաշնային կանոնակարգերի օրենսգրքի 48 հոդվ., §227.7201-ից մինչև Դաշնային կանոնակարգերի օրենսգրքի 48 հոդվ. §227.7204, Պաշտպանության դեպարտամենտի և նրանց կապալառուների կամ (բ) Դաշնային կանոնակարգերի օրենսգրքի 48 հոդվ. §12.212, որ վերաբերում է ԱՄՆ կառավարության մյուս բոլոր լիցենզավորված անձանց և նրանց կապալառուներին:

15. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

SMG -ն իր հայեցողությամբ կարող է փոփոխել կամ դադարեցնել SMG Ծառայությունները կամ փոփոխել, կասեցնել կամ դադարեցնել ձեր հաշիվը կամ Ձեր մուտքը դեպի SMG Ծառայություններ՝ առանց ծանուցման, ցանկացած պահի, ցանկացած պատճառով՝ առանց ձեր և երրորդ կողմի որևէ պարտավորության: Օրինակ, ձեր հաշիվը կարող է կասեցվել և SMG Ծառայություններ մուտք գործելը մերժվել՝ ծանուցմամբ կամ առանց դրա, եթե SMG-ն հիմքեր ունենա ենթադրելու, որ դուք անչափահաս եք: Որպես մեկ այլ օրինակ, SMG-ն կարող է դադարեցնել Ձեր Հաշվի եւ SMG Ծառայություններից օգտվելու հնարավորությունը՝ ծանուցելով, կամ առանց ծանուցման, եթե SMG-ն հիմք ունենա ենթադրելու, որ դուք տրամադրել եք սխալ, թերի կամ անարդյունավետ տեղեկատվություն, կամ այլ կերպ չեք հետևել սույն Պայմաններին կամ կիրառելի լրացուցիչ դրույթներին:

Դուք համաձայնում եք վերադարձնել կամ ոչնչացնել Կայքի նյութերի ցանկացած օրինակ, եթե մենք խնդրենք դա անել:

Պայմանների գործողության դադարեցումը չի սահմանափակում SMG-ի այլ իրավունքները կամ միջոցները: Այս Պայմանները միանշանակ պետք է պահպանվեն և գործեն, չնայած փոփոխություններին, գործողության դադարեցմանը, կասեցմանը և/կամ ավարտին:

16. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

SMG-ն հարգում է ուրիշների հեղինակային իրավունքները: Մենք արձագանքում ենք Ծանուցագրերի ենթադրյալ խախտումներին, ինչպեսպահանջվում է ԱՄՆ-ի «Թվային դարաշրջանի հեղինակային իրավունքի մասին» («**DMCA/ԹԴՀԻ**») օրենքով, և անհրաժեշտության դեպքում, կարող ենք դադարեցնել դեպի ենթադրողարգելված նյութ մուտք գործելը, հեռացնել նյութը:

Եթե բարեխղճորեն համոզված եք, որ ձեր աշխատանքը պատճենվել է՝ հեղինակային իրավունքի խախտմամբ կամ խախտվել են ձեր մտավոր սեփականության իրավունքները, որոնք խախտվել են SMG Ծառայությունների միջոցով, ձեր պահանջը կամ խախտման ծանուցումը էլեկտրոնային փոստի միջոցով կամ այլ տարբերակով ուղարկեք մեր DMCA/ԹԴՀԻ գործակալին հետևյալ հասցեով.

DMCA/ԹԴՀԻ գործակալ
Service Management Group, LLC
1737 McGee Street
Kansas City, MO 64108

Կամ էլեկտրոնային փոստով՝
privacyofficer@smg.com

Ձեր ծանուցումը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները.

a. խախտվել է սեփականատիրոջ անունից հանդես եկող լիազորված անձի ֆիզիկական կամ էլեկտրոնային ստորագրությունը,
b. հայտնաբերվել է հեղինակային իրավունքով պաշտպանված աշխատանքի հետ կապված խախտում, կամ, մի շարք հեղինակային իրավունքով պաշտպանված աշխատանքներ տեղադրված են մեկ կայքում՝ մեկ ծանուցմամբ, այս կայքում ներկայացված նմանատիպ աշխատանքների ներկայացուցչական ցանկը,
c. հայտնաբերվել է նյութը, որն ինչպես պնդում են, խախտում է հեղինակի իրավունքները և այն պետք է հեռացվի կամ հասանելի չլինի, պետք է անջատվի և այդ տեղեկատվությունը բավարար է, որպեսզի ծառայության մատակարարը հայտնաբերի այս նյութը,
d. տեղեկատվությունը բավարար է, որպեսզի ծառայության մատակարարը դիմի բողոքող կողմին, ինչպես օրինակ՝ հասցեն, հեռախոսահամարը և, եթե առկա է, էլեկտրոնային փոստի հասցեն, որով կարելի է կապ հաստատել բողոքող կողմի հետ,
e. դիմում-բողոքն այն մասին է, որ բողոքող կողմը համոզված է, որ նյութի օգտագործումը, ըստ պահանջի, թույլատրված չէ հեղինակային իրավունքի սեփականատիրոջ, նրա ներկայացուցչի կողմից կամ օրենքով, և

f. դիմումը, որ ծանուցման տեղեկատվությունը ճշգրիտ է, և սուտ վկայություն տալու դեպքում առկա է պատիժ, որ մեղադրանքի պատժատեսակով, բողոքող կողմը լիազորված է գործել սեփականատիրոջ անունից, որոնք ենթադրաբար խախտվել են։

Մեր DMCA/ԹԴՀԻ գործակալը կպատասխանի միայն DMCA/ԹԴՀԻ-ի պահանջներին համապատասխան ծանուցումներին և հարցումներին: Լրացուցիչ տեղեկությունների համար համեցեք www.copyright.gov կայք։

17. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կալիֆորնիայի Քաղաքացիական Օրենսգրքի 1789.3 հոդվածի համաձայն, մենք պարտավոր ենք Կալիֆորնիայի բնակիչներին տրամադրել սպառողների իրավունքների մասին հետևյալ տեղեկությունները.

a. SMG Ծառայությունները պատկանում են և/կամ շահագործվում են Ծառայությունների կառավարման խումբ ՍՊԸ-ի կողմից, 1737 McGee Street, Կանզաս Սիթի, MO 64108: SMG-ի կոնտակտային հեռախոսահամարն է 1-800-764-0439;
b. եթե այլ բան նախատեսված չէ, SMG Ծառայությունները մատուցվում են անվճար,
c. SMG Ծառայությունների վերաբերյալ բողոք ներկայացնելու կամ SMG Ծառայություններից օգտվելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար դիմեք Ծառայությունների կառավարման խումբ ՍՊԸ ընկերությանը՝ ուղարկելով նամակ, Ուշ. Տվյալների պաշտպանության պատասխանատու, 1737 McGee Street, Կանզաս Սիթի, MO 64108 կամ էլեկտրոնային փոստով՝privacyofficer@smg.com հասցեին («Կալիֆորնիայի բնակության հարցում» ուղիղ կապ): Դուք նաև կարող եք դիմել Կալիֆորնիայի Սպառողական ծառայությունների բաժին, Սպառողական ծառայությունների բաժնի բողոքարկման աջակցության բաժին՝ գրավոր հետևյալ հասցեով՝400 R Street, Suite 1080, Sacramento, Կալիֆորնիա 95814 կամ զանգահարել 916.445.1254 կամ 800.952.5210 հեռախոսահամարով:

18. ԱՅԼ

a. Սույն Պայմանները և Գաղտնիության Քաղաքականությունը նշված են համապատասխան կայքերում, պարունակում են SMG-ի և ձեզ վերաբերող ամբողջական պատկերացումները այս փաստաթղթում պարունակվող հարցերի վերաբերյալ:
b. Այս Պայմանները գրված են անգլերեն լեզվով: Այս անգլալեզու համաձայնագիրը կարող վերահսկել բոլոր առումներով: Սույն Համաձայնագրի ցանկացած տարբերակ ցանկացած այլ լեզվով կլինի միայն տեղադրելու համար և պարտադիր չէ որևէ կողմի համար:
c. Օգտագործման այս պայմանները բխում են բոլորի շահերից և պետք է պարտադիր լինեն SMG-ի ձեր և բնականաբար ձեր իրավահաջորդների համար:
d. Այս Պայմանները կարող են ուղարկվել SMG-ի կողմից, բայց Դուք չեք կարող դրանք փոխանցել առանց SMG-ի նախնական գրավոր համաձայնության:

e. Եթե սույն Պայմանների ցանկացած դրույթ դառնում է կամ ուժը կորցրած կամ անվավեր, մնացած դրույթները շարունակում են նույն օրենքի ուժով, կարծես այնպիսի ուժը կորցրած կամ անվավեր դրույթ չի կիրառվել:
f. Եթե SMG-ն չի կատարում, կամ դուք չեք կատարում որևէ պարտավորություն համաձայն այդ Պայմաններին, իսկ մյուս կողմը չի կատարում իր պարտավորությունը, այնուամենայնիվ, դրանց չկատարելը չի նշանակի հրաժարվել որևէ պարտավորությունից և չի խոչընդոտի բնականոն աշխատանքին:
g. Սույն Պայմաններում առկա ոչ մի բան այլևս SMG-ը կամ ձեզ չի համարի գործակալ կամ այլ ներկայացուցիչ, կամ համատեղ ձեռնարկատերեր կամ գործընկերներ:
h. Եթե SMG-ն կամ դուք ողջամիտ պատճառներով չեք կարող կատարել սույն Պայմանների և դրույթների որևէ պարտավորություն, կողմերը հիմք ընդունելով սույն դրույթները, պարտավորությունների կատարումը երկարաձգում են՝ նշված ժամանակահատվածում դրանց ուշացման կամ կատարման անհնարինության պատճառով:
i. Վերնագրերը և ստորագրությունները բերված են միայն հարմարության համար:

ՀԱՐՑԵՐ ԱՌԱՋԱՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Եթե ունեք հարցեր սույն Օգտագործման պայմանների կամ SMG Ծառայությունների վերաբերյալ, կապվեք մեզ հետ privacyofficer@smg.com հասցեով:

Դուք նաև կարող եք գրել մեզ հետևյալ հասցեով.
Service Management Group, LLC
Ում՝ Data Protection Officer
1737 McGee Street
Kansas City, MO 64108

®/TM-ի ապրանքանիշ © Ծառայությունների կառավարման խումբ ՍՊԸ 2017: Բոլոր իրավունքները պաշտպանված են: